# ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 29-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ 2004-2005 ուսումնական տարվա շրջանավարտների ավարտաճառերի պաշտպանություն: Բանավոր պաշտպանության էին ներկայացվել Մայր Աթոռի միաբաններ՝ Տ. Շահե արք. Անանյանի «Անդեմ նախադասությունները չորս Ավետարաններում», Տ. Տարոն արք. Ղուլիկյանի «Վաղորդյան մանկավարժություն» և Դավիթ սրկ. Գույյանի «Բագրատունիների թագավորության պետական կարգը» աշխատանքները:

Քննիչ հանձնաժողովը, նախագահությամբ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի, քննության առավ ներկայացված ավարտաճառերը և ճեմարանավարտների հաջող բանավոր պաշտպանությունից հետո փվեց իր դրական գնահատականը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*